

քէոյ՝, ընդ մէջ գնալով երկուց բարձրակատար գաղաթանցն, եւ իջանելով զառիւլար միւսոյ կողման վազս առնելով ընդ ջրոյն կողմն, որ կայ հանգէպ Մանդալինաց գաւառին՝ յարեւմտեան Շահանայ՝. գտաք անդ պէսպէս տեսակս քարանց եւ բերեալ շինեցաք զկաթողիկէն գեղեցկաքանդակ յօրինմամբ. նմանապէս եւ գաւիթ կամարակապ քարեայ սեամբք. եւ զանկատառն կաթողիկեայ խաչիւ պսակեալ եւ Սուրբ Հոգոյն սեղանիւն զարդարեալ, եւ այլ շինուածք եւ ըստ չափոն՝ թանապիք եւ խրճիթք, ի փառս Աստուծոյ։³

Իննսֆեան, առուակին Առաքելոց աղբիւրները երբեք չինուած չեն, եւ ճիշդ հիւսիսային կողմը կ'իյնան վանքին, գրեթէ իննակեայ եւ վանքին մէջ տեղ։ Առաքելոնք ըստ ածնեան ալ Առաքելոցին մօտ են նոյն ձեւով։

1 Քարբէ Ս. Կարապետի հիւսիսային կողմը, կէս ժամ հեռաւորութեամբ, կը բարձրանայ, գաղաթը հարթ գաշտ մ'է եւ տիրող դիրք մ'ունի հեռաւոր հորիզոններով՝ երբ օդը ջինջ է վճիտ կ'ընդնմարեն նոյն իսկ Մասիսը։

2 Մանդալինայի եւ Շահանայի կարելի չէ որոշել հիմակուան տեղը. բայց ցոյց տրուած գիծը բաւական հեռի է Ս. Կարապետէն եւ վարդապետի Արեւմտեան ծայրերը կ'իյնայ։

3 Շինութիւնները, ինչպէս կ'երեւայ, թէ հաստատուն եղած են եւ թէ ճաշակաւոր։ Ս. Կարապետի Կաթողիկէն է շինուածը։ Կամարակապ գաւիթը, կենդոնական տաճարն է, 1788ի երկրաշարժէն ետքը նորէն ընդարձակուեցաւ։ Իսկ Չանգակատան մէջ շինուած Ս. Հոգոյն խորանը, զոր ինժեճեան ալ կը յիշէ (էջ 196), դժբախտաբար չտեսայ։ — Թանապիթ, հիմակուան թաղաւան ըսուածը, ո՛ր կը պարաստեն կաթնեղէն բոլոր ու տեղիքները մածուն, կարագ, թան, ժածիկ, իւղ)։ Թանապիթ ուրիշ տեղ մը Թանապիթ ձեւով գրուած է։ «Նաեւ շինուածք բոլորակի թանապալք քոչ ապարանք սենեակք եւ խոհարանոցք եւ այլ ամենայն շտեմարանքն այսպէս առանց կիտադրութեան (Տես Գիւտն Գիւրք Գ. էջ 796)։ Եւ իսկ բառին եւ հիմակուան թաղաւան նոյնու թեւէն կը հետեւցընեմ թէ թանապիք = թացտուն։ Մուշ այս վերջին բառը լսած եմ միայն։